ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5
հեռ. (+374 10) 59 22 59, էլ. փոստ՝ unibank@unibank.am
Ինտերնետային կայք՝ www.unibank.am
Հաշվետվություն թիվ 07, 27.06.2019

<Յունիբանկ> ԲԲԸ Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր ժողովի որոշումների վերաբերյալ

25.06.2019թ. <Յունիբանկ> ԲԲԸ Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր ժողովի նիստում կայացվել են հետևյալ որոշումները՝

1. Հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ բաժնետերերի Ընդհանուր ժողովի Հաշվիչ հանձնաժողովի կազմը 3 տարի լիազորությունների ժամկետով՝ Աշխատակազմի ղեկավար Աննա Բադոյան (նախագահ), Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման տնօրենի տեղակալ – դատաիրավական աշխատանքների դեպարտամենտի տնօրեն Նուրիջան Կիրակոսյան, Բյուջետային միջոցների վերահսկման վարչության պետ Հայկ Նալբանդյան:
2. Հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ 2018թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը:
3. Հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ 2018թ. ֆինանսական հաշվետվությունները:
4. Հաստատել <Յունիբանկ> ԲԲԸ 2018թ. Ներքին աուդիտի հաշվետվությունը:
5. Խորհրդի քանակական կազմը թողնել անփոփոխ: Վերընտրել <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Դավիթ Փափազյանին, Վարդան Աթայանին, Արտեմ Կոնստանդյանին:
6. Խորհրդի կազմը հաստատել հետևյալ կերպ՝ Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով, Էդուարդ Զամանյան, Հրահատ Արզումանյան, Դավիթ Փափազյան, Վարդան Աթայան, Արտեմ Կոնստանդյան:
7. <Յունիբանկ> ԲԲԸ 2018թ. ֆինանսական արդյունքներով, սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել,

ըստ ՀՀՄՍ 931.297 հազ. ՀՀ դրամի չափով զուտ շահույթն ուղղել Բանկի հեռանկարային զարգացմանը, գլխավոր պահուստին հատկացնել 5%:

8. Հաստատել <Գրանթ Թորնթոն> ՓԲԸ-ին՝ որպես <Յունիբանկ> ԲԲԸ 2019 թվականի Ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձ:

Վարչության նախագահ – գործադիր տնօրեն Մեսրոպ Հակոբյան